



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԼՈՒՍԱԿԵՐՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1
26 հունվարի 2011 թվական

Հիմք ընդունելով Լուսակերտ համայնքի ավագանու 2011 թվականի հունվարի 25-ի թիվ 4-Ն որոշումը 2011 թվականի տեղական բյուջեի փոփոխման մասին

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Հաստատել 2011 թվականի Լուսակերտ համայնքի տեղական բյուջեն ըստ եռամսյա համամասնություններով համաձայն հավելվածի:

Լուսակերտ համայնքի ղեկավար՝

Սամվել Բալաբեկյան

Հավելված
 Հայաստանի Հանրապետության Շիրակի
 մարզի Լուսակերտ համայնքի
 ղեկավարի 2011 թվականի հունվարի
 26-ի թիվ 1 որոշման

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Լուսակերտ համայնքի տեղական
 բյուջեն եռամսյա համամասնություններով.

ԵԿԱՄՏԱՅԻՆ ՄԱՍՈՎ	ՏԱՐԵ ԿԱՆ	ԵՌԱՄՍՅԱԿ ՆԵՐ			
		1	2	3	4
Հողի հարկ	1630.0	586.8	800.0	1250.0	1630.0
Գույքահարկ	323.1	40.0	50.0	60.0	323.1
Տեղական տուրք	250.0	62.0	125.0	185.0	250.0
Դոտացիա	8253.0	2063.2	4126.5	6189.7	8253.0
Հողի վարձավճար	3039.0	650.0	963.8	1838.8	3039.0
Անասնաբույժի գումար	600.0	150.0	300.0	450.0	600.0
Ընդամենը եկամտային մասով	14095.1	3552.0	6365.3	9973.5	14095.1
ԾԱԽՍԱՅԻՆ ՄԱՍՈՎ					
Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ	10259.0	2574.0	4708.0	6942.0	10259.0
Անասնաբույժի գումար	600.0	150.0	300.0	450.0	600.0
Ճանապարհային տրանսպորտ	2600.0	2000.0	2000.0	2600.0	2600.0
Աղբահանում	150.0	0	50.0	100.0	150.0
Զբոսաշրջության արտոնություններ	100.0	0	30.0	55.0	100.0
Փողոցների լուսավորում	2000.0	2000.0	2000.0	2000.0	2000.0
Գրադարաններ	600.0	600.0	600.0	600.0	600.0
Մշակույթի տներ ակումբներ կենտրոններ	883.1	683.1	883.1	883.1	883.1
Այլ մշակութային կազմակերպություններ	500.0	50.0	150.0	300.0	500.0
Հուշարձանների վերականգնում	500.0	0	0	200.0	500.0
Սոց.հատուկ արտոնություններ	581.1	173.0	322.3	521.5	581.1
Պահուստային ֆոնդ	755.0	755.0	755.0	755.0	755.0
Ընդամենը ծախսային մասով	19528.2	8985.1	11798.4	15406.6	19528.2



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԼՈՒՍԱԿԵՐՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 2

02 փետրվարի 2011 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԼՈՒՍԱԿԵՐՏ ՀԱՄԱՅՆՔԻ 1-ԻՆ ՓՈՂՈՑ ՏՈՒՆ 9 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 005-005 ԿՈՆՏՈՒՐ 0.288 ՀԱ/ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ, ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ – ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՍԲ Երվանդ Հաբեթի Գալստյանի ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Ղեկավարվելով Իրավունքն հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի Հայաստանի Հանրապետության քաղաքային եվ գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբեկտների անվանակոչման, անվանափոխության, անշարժ գույքի ըստ դրա գտնվելու եվ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման եվ հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու եվ հասցեների գրանցման լիազոր մարմնի սահմանելու մասին թիվ 2387 որոշմամբ.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վերականգնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Լուսակերտ համայնքի փող. 1 տուն 9, 005-005 կոնտուրում գտնվող գույքային միավորների նկատմամբ Երվանդ Հաբեթի Գալստյանի հողօգտագործման իրավունքը բնակելի տան եվ օժանդակ շինությունների եվ դրանց սպասարկման համար անհրաժեշտ 0.288 հա/ մակերեսով հողամասի եվ նրա վրա գտնվող շենք - շինությունների նկատմամբ:
2. Նշված գույքային միավորների նկատմամբ որպես համասեփականատերեր հանդիսանում են.
ա/ ինքը՝ Երվանդ Հաբեթի Գալստյան ծնված 30.11.1938 թ., անձնագիր AC 0492073, տրված 24.12.1998թ. 028 կողմից:
բ/ կինը՝ Մարիետա Հարութի Գալստյան ծնված 01.01.1939թ., անձնագիր AB 0585894, տրված 25.12.1997թ. 028 կողմից:

գ/.տղան՝ - Հաբեթ Երվանդի Գալստյան ծնված 05.01.1973թ., անձնագիր AA 0488450 տրված 27.08.1996թ. 028 կողմից:

դ/.տղան՝ - Վահագն Երվանդի Գալստյան ծնված 06.11.1970թ., անձնագիր AK 0469647 տրված 22.03.2010թ. 028 կողմից:

3. Շենք – շինությունների մակերեսները ենթակա են ճշտման Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Արթիկի տարածքային ստորաբաժանման կողմից:
4. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից տրված գլխավոր հատակագծով:
5. Առաջարկել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Արթիկի տարածքային ստորաբաժանմանը գրանցել քաղաքացի՝ Երվանդ Հաբեթի Գալստյանի սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի եվ շենք շինությունների նկատմամբ, տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական լուծելով գույքագրման արդյունքում հաշվառված անշարժ գույքի խնդիրները:
6. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղար Մհեր Սովսիսյանի վրա:

Լուսակերտ համայնքի ղեկավար՝

Ս. Բալարեկյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ

ԼՈՒՍԱԿԵՐՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 3

21 փետրվարի 2011 թվական

Շիրակի մարզի Լուսակերտ համայնքում քաղաքացիական պաշտպանության շտաբային ուսումնավարություն անցկացնելու մասին

Ի կատարումն Շիրակի մարզային փրկարարական վարչության «Շիրակի մարզի բնակչության պաշտպանության համակարգի նախապատրաստման 2011 թվականի հիմնական միջոցառումների պլանի»-ի եվ «2011թ. մարզի թվով 30 գյուղական համայնքներում շտաբային ուսումնավարություններ անցկացնելու մասին» Շիրակի մարզպետի թիվ 54-Ա որոշման համաձայն, ս/թ-ի մարտի 15-ին Լուսակերտ համայնքում իմ ղեկավարությամբ անցկացնել շտաբային ուսումնավարություն « Բնակչության պաշտպանության միջոցառումների կազմակերպումը ձևաբքի դեպքում» թեմայով:
Ուսումնավարության կազմակերպման եվ արդյունավետ անցկացման նպատակով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Նշանակել՝

Ուսումնավարության ղեկավարման շտաբի պետ-համայնքի ղեկավարի տեղակալ՝ Արամ Սաֆարյան:

Շտաբի կազմում ընդգրկել համայնքի Ք.Պ. կազմավորումների ղեկավարներին:

Ուսումնավարության արդյունքների ամփոփման խմբի պետ- աշխատակազմի քարտուղար՝ Մհեր Մովսիսյան:

2.Ուսումնավարություններում ընդգրկել՝

Համայնքի տարահանման եվ արտակարգ իրավիճակների հանձնաժողովները, Ք.Պ. կազմավորումները:

3. Ուսումնավարության ղեկավարման շտաբի պետին՝ մշակել եվ մինչեվ 04.03.2011թ. իմ հաստատմանը ներկայացնել ուսումնավարության անցկացման փաստաթղթերի փաթեթը:

4. Ուսումնավարության ղեկավարումը իրականացնել գյուղապետի մշտական կառավարման կետից:

Լուսակերտ համայնքի ղեկավար՝

Սամվել Բալաբեկյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԼՈՒՍԱԿԵՐՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 4
05 ապրիլի 2011 թվական

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Լուսակերտ համայնքի 7-րդ փողոց 2-րդ փակուղի տուն 5 հասցեի առանձնացվող տարածքին նոր հասցե տրամադրելու մասին:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի փետրվարի 16-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքային եվ գյուղական բնակավայրերում հասցեավորման վերաբերյալ» թիվ 68-Ն որոշմամբ.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Լուսակերտ համայնքի 7-րդ փողոց 2-րդ փակուղի տուն 5 հասցեի տան առանձնացվող տարածքին տրամադրել 7-րդ փողոց 2-րդ փակուղի տուն 5/1 հասցեն:

Լուսակերտ համայնքի ղեկավար՝

Սամվել Բալաբեկյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 5
15 ապրիլի 2011 թվական

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Լուսակերտի համայնքի S-70 Ս մակնիշի թրթուրավոր տրակտորը Լուսակերտի համայնքի բնակիչ Պատվական Կարապետյանին վաճառելու մասին:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի դրույթով եվ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Լուսակերտի համայնքի ավագանու 2011 թվականի մարտի 4-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Լուսակերտի համայնքի սեփականությունը հանդիսացող S-70 Ս մակնիշի թրթուրավոր տրակտորը օտարելու, օտարման մեկնարկային գինն ու պայմանները հաստատելու մասին» թիվ 7-Ն որոշումը, ինչպես նաև աճուրդի արդյունքներն ամփոփելու վերաբերյալ, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Լուսակերտի համայնքի աճուրդային հանձնաժողովի 2011 թվականի ապրիլի 15-ի եզրակացությունը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՍ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Լուսակերտի համայնքի սեփականությունը հանդիսացող S-70 Ս մակնիշի թրթուրավոր տրակտորը (արտադրությունը 1977թ.) 100.000 (հարյուր հազար) դրամ արժեքով վաճառել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Լուսակերտի համայնքի բնակիչ՝ Պատվական Հարութիկի Կարապետյանին (անձնագիր AC 0492767 տրված 14.01.1999թ. 028-ի կողմից) եվ կնքել առուծախի պայմանագիր:

Լուսակերտ համայնքի ղեկավար՝

Սամվել Բալաբեկյան



ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԼՈՒՍԱԿԵՐՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 6
30 մայիսի 2011 թվական

Համայնքում քաղաքացիական պաշտպանության շտաբ, տարահանման հանձնաժողով եվ քաղաքացիական պաշտպանության կազմավորումներ ստեղծելու մասին:

Ղեկավարվելով 29.12.1996թ-ի «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» եվ 29.03.2002 թ-ի «Քաղաքացիական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով, Լուսակերտ համայնքում քաղաքացիական պաշտպանության միջոցառումների պլանավորման, կազմակերպման եվ իրականացման նպատակով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Ստեղծել՝

1. քաղաքացիական պաշտպանության շտաբ, շտաբի պետ նշանակել համայնքի ղեկավարի տեղակալին եվ շտաբը համալրել համայնքապետարանի աշխատակազմի համապատասխան մասնագետներով:
2. համայնքի տարահանման հանձնաժողով, հանձնաժողովի նախագահ նշանակել համայնքի դպրոցի տնօրենին եվ հանձնաժողովը համալրել դպրոցի ուսուցչական կազմից, գյուղապետարանի անձնակազմից եվ համայնքի բնակիչներից:
3. քաղաքացիական պաշտպանության կազմավորումներ՝
ա/ փրկարարական խումբ՝ 1/9 անձնակազմով, հրամանատար՝ Աշոտ Գալստյան
բ/ կապի խումբ՝ 1/3 անձնակազմով, հրամանատար՝ Մկրտիչ Սարգսյան
գ/ քիմիական, ճառագայթային դիտարկման կետ՝ 1/3 անձնակազմով, հրամանատար՝ Սաթենիկ Վարդանյան
դ/ հասարարական կարգի պահպանման խումբ՝ 1/3 անձնակազմով՝ հրամանատար՝ Հակոբ Մովսիսյան
ե/ անհատական պաշտպանության միջոցների բաշխման խումբ՝ 1/3 անձնակազմով, հրամանատար՝ Հովհաննես Հովհաննիսյան
զ/ գյուղատնտեսական կենդանիների եվ բույսերի պաշտպանության խումբ՝ 1/3 անձնակազմով, հրամանատար Մկրտիչ Կարապետյան

2. Հանձնարարել՝

1. քաղաքացիական պաշտպանության շտաբի պետին՝

ա/ քաղաքացիական պաշտպանության կազմավորումները համալրել անձնակազմով, գույքով եվ տեխնիկայով

բ/ կազմակերպել եվ իրականացնել համայնքի քաղաքացիական պաշտպանության ղեկավար կազմի, կազմավորումների անձնակազմի եվ բնակչության ուսուցումը, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 30.01.2003 թ-ի թիվ 134-Ն որոշման.

գ/ կազմել եվ յուրաքանչյուր տարի մինչեվ հունվարի 1-ը ճշտել համայնքի քաղաքացիական պաշտպանության պլանը համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 22.04.2004թ-ի թիվ 633-Ն որոշման.

2. Համայնքապետարանի քարտուղարին՝ սույն որոշման մասին իրազեկել ըստ պատկանելիության:

3. Սույն որոշման կատարման հսկողությունը իրականացնում եմ անձամբ:

Լուսակերտ համայնքի ղեկավար՝

Սամվել Բալաբեկյան